Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի
Մեղրի համայնքի ավագանու
2025թ. փետրվարի 18-ի N19-Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍՈՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի ազդակիր բնակավայրում Համայնքային մասհանումների ծախսման իրականացված ծրագրի մասին

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի 4.1-ին կետով սահմանված՝ համայնքային մասհանումների ծախսման ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) անվանումը՝

«Մեղրի քաղաքի մարզադպրոցի մարզադաշտի վերանորոգում»

1. ԾՐԱԳՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրի իրավական հիմքերը - Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 27-ի N 64-Ա որոշում՝ 2024 թվականի հունիսի 19-ի N58-Ա որոշման փոփոխություններով և «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենք:

1. Ծրագրի սկիզբը և ավարտը - Ծրագրի իրականացման սկիզբը՝ 01 հուլիս 2024թ., ավարտը՝ 30 դեկտեմբերի 2024թ.:

2. Ծրագրի նախագծային արժեքը 134 298 230 ՀՀ դրամ

3. Համայնքի առկա խնդիրները և նախնական վիճակի նկարագրությունը - Մեղրի համայնքի մարզադպրոցը կառուցվել է 1960-1970 թթ.: Մարզադաշտի տարածքը գտնվում է մի կողմից քաղաքի բազմաբնակարան շենքերի հարևանությամբ, մյուս կողմից՝ Մեղրի քաղաքի թիվ 1 միջնակարգ դպրոցի հարևանությամբ և հանդիսանում է Մեղրի քաղաքի միակ մարզադաշտը:

Համայնքում գործում են ֆուտբոլի, կարատեի խմբակներ: Խմբակների սաների մարզումները, ինչպես նաև քաղաքի հանրակրթական դպրոցների աշակերտների ֆիզիկական պարապմունքները, սպորտային միջոցառումները իրականացվում են նշված մարզադաշտում:

Ներկայումս Մեղրի համայնքի հանրակրթական դպրոցներում սովորում են շուրջ 1561 աշակերտներ և համայնքն ունի սպորտի զարգացման մեծ ներուժ: Մեղրի քաղաքի մարզադաշտի անբարեկարգ վիճակը խոչընդոտում է սպորտաձևերի լիարժեք զարգացմանը և բացօթյա մարզական միջոցառումների կազմակերպմանը:

Ներկայիս մարզադաշտի անմխիթար վիճակը դարձել է համայնքի առաջնահերթություններից մեկը, որը շուտափույթ լուծում է պահանջում:

Հրատապությունից ելնելով ծրագրով նախատեսվում է վերանորոգել Մեղրի քաղաքի մարզադպրոցի մարզադաշտը, որի ուսումնասիրությունից պարզվել է՝

Առկա խնդիրները

- Մեղրի քաղաքի մարզադպրոցի մարզադաշտի անբարեկարգ վիճակ
- Երիտասարդների ֆիզիկական ակտիվության, բացօթյա ժամանցի կազմակերպման սակավ հնարավորություններ
- Արտադպրոցական մարզական կրթության ոլորտում երեխաների ընդգրկվածության ցածր մակարդակ
- Համայնքում մարզային մրցումներ անցկացնելու, մարզական միջոցառումներ հյուրընկալելու պայմանների բացակայություն

4. ***Ծրագրի նպատակը*** - Համայնքում երիտասարդների ֆիզիկական դաստիարակության,առողջ ապրելակերպի մակարդակի բարձրացումն է:

5. ***Ծրագրով հասրատվված վերջնական ակնկալվող արդյունքները*** - Մեղրի քաղաքի մարզադպրոցի վերանորոգված մարզադաշտ:

6. ***Ծրագրի փաստացի արդյունքները*** - Ծրագրի ավարտից հետո՝ գործող մարզադաշտ:

7. ***Ծրագրի շահառուները*** - Ծրագրի ուղղակի շահառուներ են հանդիսանալունախադպրոցական տարիքի 443 երեխաներըդպրոցական տարիքի մոտ 1561 աշակերտները և համայնքի բնակչությունը:

8. ***Ծրագրի շրջանակում նախատեսված միջոցառումները և դրանց ընտրության հիմնավորումները*** - Ծրագրի շրջանակում նախատեսվում է ակտիվացնել համայնքի մարզամշակութային կյանքը: Մեղրի համայնքի Մեղրիի քաղաքային մարզադաշտը և իր հարակից տարածքները, որոնք ծառայել են որպես բասկետբոլի և վոլեյբոլի դաշտեր, իսկ լողավազանները ողջ համայնքի դեռահասների, պատանիների համար Մեղրիի ամառային տապ ամիսների մխիթարանքն ու միակ զբաղմունքի վայրերն են, այսօր գտնվում են անմխիթար վիճակում: «Մեղրի քաղաքի մարզադպրոցի մարզադաշտի վերանորոգում» ծախսման ծրագրում առաջնահերթությունը տրվում է մշակութի, սպորտի և երիտասարդության զբաղվածությանը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 01.09.2022թ. «Համայնքային մասհանումների ծախսման ծրագրով նախատեսված միջոցառումների ուղղությունները, դրանց առաջնահերթությունները հաստատելու մասին» թիվ 1370-Ն որոշման 8-րդ կետի: Ծրագրի իրականացմամբ լուծվում է համայնքի կարևորագույն նշանակության խնդիրներից՝ երիտասարդության արտագաղթը, որն էլ իր հերթին կլուծի սահմանամերձ Մեղրի համայնքի անվտանգային և ռազմական բազում խորքային հարցեր:

2. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Ծրագրի իրականացման փաստացի արժեքը - Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 125 551 200 ՀՀ դրամ, այդ թվում 5 502 000 ՀՀ դրամ՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերում, 540 000 ՀՀ դրամ՝ նախագծի

փորձաքննություն, 116 992 200 ՀՀ դրամ՝ շինարարական աշխատանքներ, 739 000 ՀՀ դրամ՝ հեղինակային հսկողություն, 1 848 000 ՀՀ դրամը՝ տեխնիկական հսկողություն:

2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ չեն իրականացվել աշխատանքներ:

2024 թվականի մասհանումների գումարը կազմում է 93 652 900 ՀՀ դրամ:

2. ***Ծրագրի փաստացի շահառուները*** - Ծրագրի փաստացի շահառուները հնարավոր կլինի նշել ծրագրի ավարտից հետո:

3. ***Ծրագրի շրջանակում իրականացված միջոցառումները*** - Շինարարական աշխատանքների պայմանագրի կնքման աշխատանքները ընթացքի մեջ են:

4. ***Ծրագիրն իրականացնողները և աջակցողները*** - Պատվիրատուն Մեղրիի համայնքապետարանն է, նախագծանախահաշվային փաստաթղթերի ֆինանսավորումը իրականացրել է «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ն, փորձաքննությունը ֆինանսավորվել է «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ-ի կողմից, շինարարական աշխատանքներն իրականացվելու են ՍԱԹԵՆԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ա/Ձ, «ԱՐԵԳ ՍՏՐՈՅ» ՍՊԸ, «ՖԼՈՐԱ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ և «ԷՑՇԻՆԵՆԹԱԿԱՅԱՆ» ԲԲԸ կոնսորցիումի կողմից:

5. ***Ծրագրի փաստացի վերջնական արդյունքների նկարագրությունը*** - Փաստացի վերջնական արդյունքները հնարավոր կլինի նշել ծրագրի ավարտից հետո:

6. ***Հաշվետվության հրապարակումը*** - Մեղրի համայնքի ավագանու արտահերթ նիստի օրը՝ 18 փետրվար 2025թ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**